ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

11 մարտի 2016թ **2-Ն**

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Լսելով 2015թ բյուջեի կատարման մասին Կողբ համայնքի ղեկավարի հաշվետվությունը, ավագանին նշում է որ 2015թ բյուջեն կազմվել է համայնքի 2012 – 2016թթ քառամյա զարգացման ծրագրով բյուջետային տարվա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորման հիման վրա և օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացվել համայնքի ավագանու հաստատմանը:

Համայնքի բյուջեի մասին ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո համայնքի ղեկավարը սահմանել է բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները, բյուջետային օրենսդրությամբ նախատեսված կարգով և ժամկետներում հաստատել համայնքային ենթակայության բյուջետային կազմակերպությունների պահպանման ծախսերի նախահաշիվները:

2015թ համայնքի վարչական բյուջեի եկամուտներ է նախատեսվել 106313.15 հազ.դրամ, այդ թվում՝ հարկեր և տուրքեր՝ 17750.0 հազ.դրամ, պաշտոնական դրամաշնորհներ՝ 87757.15 հազ.դրամ, այլ եկամուտներ՝ 812.0 հազ.դրամ:

Հարկերը և տուրքերը բյուջեի մուտքերի կառուցվածքում շենք –շինությունների գույքահարկից նախատեսվել է 350.0 հազ.դրամ, հողի հարկից՝ 4270.0 հազ.դրամ, փոխադրամիջոցների համար գույքահարկից՝ 12750.0 հազ.դրամ, տեղական տուրքերից՝ 380.0հազ.դրամ:

Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվել է 70221.6 հազ. դրամ դոտացիա, այլ դոտացիա՝ 2535.5 հազ. դրամ, պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող սուբվենցիա՝ 5334.7հազ.դրամ, այլ ընթացիկ դրամաշնորհներ՝ 7990.4 հազ.դրամ:

ՀՀ Կառավարության կողմից բյուջետային տարվա ընթացքում հատկացվել է 1344.95 հազ. դրամ սուբվենցիա՝ վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով համայնքում գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման և 324.0 հազ.դրամ՝

2015թ նոյեմբերի 12-ին տեղի ունեցած ուժեղ քամու հետևանքները վերացնելու

նպատակով:
Նշված գումարները ներառվել են համայնքի բյուջեի եկամտային մասում և ամբողջությամբ ծախսվել է նպատակային նշանակությամբ:
Սահմանվել են նաև 812.0հազ.դրամ այլ եկամուտներ, այդ թվում՝ հողի վարձակալությունից վարձավճար՝450.0հազ.դրամ,այլ գույքի վարձակալությունից վարձավճար՝252.0հազ.դրամ, տեղական վճարներ 10.0հազ. դրամ և այլ եկամուտներ 100.0հազ.դրամ:
2015թ բյուջեի դեֆիցիտի ծածկմանն է ուղղվել 3552.6 հազ.դրամ:
Համայնքի բյուջեի կատարման վերահսկման շնորհիվ այն եկամուտների մասով գործնականում կատարվել է ամբողջությամբ /105852.35հազ.դրամ, կամ 99.5 տոկոս/, այդ թվում հարկերի և տուրքերի մասով բյուջե է մուտքագրվել 17362.3 հազ. դրամ /97.8%/, որից գույքահարկ շենք – շինությունների համար 395.1 հազ.դրամ /112.9%/, հողի հարկ՝ 4269.7հազ.դրամ /100%/, գույքահարկ փոխադրամիջոցների համար՝ 12328.5 հազ.դրամ /96.6%/ և տեղական տուրքեր՝369.0 հազ դրամ /97.1%/:
Պետական բյուջեից համայնքին տրամադրվող պաշտոնական դրամաշնորհները հատկացվել են ամբողջ ծավալով, իսկ այլ եկամուտների գծով մուտքերը կազմել է 738.9 հազ.դրամ բյուջեի եկամուտների մասին տեղեկանքը՝հավելված 1-ում/:
2015թ բյուջեի ձևավորման աղբյուրների և նրա եկամտային մասի գնահատումը իրականացվել է տեղական ներքին ռեսուրսների ներգրավմամբ, նախորդ տարիների թերությունների և բացթողումների վերլուծության հիման վրա:
2015թ բյուջեի ծավալը 2014թ 86597.0հազ.դրամի նկատմամբ նախատեսվել է 06313.5հազ.դրամ և կատարվել է 105852.35հազ.դրամով: Լրացուցիչ միջոցների ներգրավումը հնարավորություն է տվել ժամանակին կատարել պարտադիր ծախսումները /ՏԻՄ –ի և ենթակա բյուջետային կազմակերպությունների աշխատողների աշխատավարձեր, սոցիալական ապահովության և այլ պարտադիր վճարումներ/ և իրականացնել նոր սոցիալական ծրագրեր:
Այսպես.
Համայնքի արոտավայրերի ենթակառուցվածքների բարելավման և անասնապահության զարգացման նպատակով «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» Պետական հիմնարկի հետ համայնքում 2015 -2016թթ իրականացվելիք 35 մլն 952 հազ.դրամ աշխատանքներից 1 մլն 798 հազ.դրամը որպես ներդրում հատկացվել է համայնքի բյուջեից:
2015թ. բյուջեով նախատեսված եկամուտներին համապատասխան սահմանվել են նաև ծախսումները /բյուջեի ծախսումների մասին տեղեկանքը՝ հավելված 2-ում/:
2015թ. համայնքի բյուջեից ֆինանսավորվել և փաստացի ծախսվել է 107066.35 դրամ /ծրագիր՝ 109865.75/, որից Տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմի պահպանման նպատակով ծախսվել է 30962.9 հազար դրամ /ծրագիր՝32332.5 հազ.դրամ/, ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների իրականացման համար՝ 4426.25 հազ. դրամ /ծրագիր՝5095.0 հազ. դրամ/:
2015թ-ին ծախսումներ են կատարվել ջրամատակարարման և փողոցային լուսավորության /ծախս՝ 655.6 հազ. դրամ, ծրագիր՝ 2173.0 հազ. դրամ/, շրջակա միջավայրի պահպանության /աղբահանություն՝ ծախս՝ 7910.3 հազ. դրամ, ծրագիր՝ 8200.0 հազ. դրամ/ նպատակով:

Բյուջետային տարում ուշադրության կենտրոնում են եղել մշակույթի, կրթության և բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտները:
2015թ նախատեսվել է մշակութի ոլորտին ուղղել 15587.7 հազ. դրամ /փաստացի՝ 15513.3 հազ. դրամ/, կրթությանը՝ 42400.0 հազ. դրամ /այդ թվում նախադպրոցական կրթությանը՝ 28240.0 հազ. դրամ, արտադպրոցական դաստիարակությանը՝ 14160.0 հազ. դրամ, փաստացի՝ 42400.0 հազ. դրամ/ և սոցիալական պաշտպանությանը՝ 3389.95 հազ. դրամ / փաստացի՝ 3244.8 հազ. դրամ/, որից՝ 2045.0հազ.դրամը ծախսվել է սոցիալապես անապահով խմբերին օգնություն ցույց տալու նպատակով: Պետության կողմից հատկացված 5334.7 հազ. դրամ սուբվինցիան ծախսվել է մանկական երաժշտական դպրոցի ազգային նվագարանների խմբերում սովորող 20 աշակերտների ուսման ծախսերը փոխհատուցելու նպատակով:
2015 թ. ընթացիկ ծախսումներ են կատարվել համայնքին մատուցված ծառայությունների դիմաց վճարման, ապրանքների գնման, փողոցների բարեկարգման և ջրահեռացման նպատակով:
Երկրորդային փողոցներում ջրահեռացում անցկացնելու նպատակով համայնքի բյուջեից 2015թ. ծախսվել է 914.0հազ դրամ, 569.1 հազ. դրամ է հատկացվել մանկապարտեզների համար լվացարաններ ձեռք բերելու և տեղադրելու, N2 մանկապարտեզի կոյուղին նորոգելու համար, իսկ N2 մանկապարտեզի գազաֆիկացման աշխատանքների վրա ծախսվել է 263.0 հազ. դրամ: Բյուջեի միջոցներով ձեռք են բերվել ջրատաքացուցիչներ և համակարգիչ /300.0 հազ. դրամ/, որոնք նույնպես հանձնվել են մանկապարտեզներին:
2015թ. բյուջետային տարում պարտքեր չեն կուտակվել, ֆոնդային բյուջեից կապիտալ ներդրումներ չեն կատարվել, իսկ բյուջեի փոփոխությունների և վերաբաշխումների հանրագումարը /9438.15 հազ. դրամ/ չի գերազանցել համայնքի ավագանու որոշմամբ գործառնական և տնտեսագիտական դասակարգմամբ հաստատված առավելագույն չափաքանակին /16224.0 հազ. դրամ/:
Համայնքի բյուջեի տարեվերջյան ազատ մնացորդը կազմել է 4543.1 հազ. դրամ:
Ավագանին նշում է նաև, որ կատարված աշխատանքների հետ մեկտեղ բյուջետային տարում թերություններ և բացթողումներ են արձանագրվել բյուջեով նախատեսված եկամուտների և ծախսերի ամբողջ ծավալով կատարման աշխատանքներում:
Այսպես.
Համայնքի բյուջեով նախատեսվել է 2015թ. հավաքագրել 4270.0 հազ. դրամ հողի հարկ /որից՝ 4122.0 հազ. դրամը փոխհատուցման կարգով հատկացվել է պետության կողմից և միայն 148.0 հազ. դրամը՝ սեփական միջոցներով/ այն դեպքում, երբ հարկատուների հողի հարկից ապառքները 01.01.2015թ. դրությամբ կազմել է 8338.0 հազ. դրամ:
Նույն կարգով բյուջեում միայն մասնակի կարգով է հաշվի առնվել փոխադրամիջոցների գույքահարկի գծով ապառքների 8515.8 հազ. դրամ գումարը:
Չնայած 2014թ. նկատմամբ արձանագրված առաջընթացին, բյուջեն թերակատարվել է տեղական տուրքերի /97.1 % 2015 թ. և 86.3 % 2014թ./ և այլ եկամուտների գծով /91.0% 2015թ. և 74.9 % 2014թ./:
Բյուջետային մուտքերի նկատմամբ թույլ հսկողության պատճառով բյուջեն անհամաչափ է կատարվել հաստատված եռամսյակային համամասնություններով:
2015թ. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում նախատեսվել է բյուջե մուտքագրել փոխադրամիջոցների գույքահարկ համապատասխանաբար՝ 3187,0 , 3188.0, 3185.0 և

3190.0 հազար դրամ, սակայն փաստացի 1-ին եռամսյակում մուտք է եղել 2879.3 հազ. դրամ, 2-րդ եռամսյակում՝ 2300.0 հազ. դրամ, 3-րդ եռամսյակում՝ 1830.5 հազ. դրամ 4-րդ եռամսյակում՝ 5983.9 հազ. դրամ:
Բյուջետային տարում նույն օրինաչափությունը նկատվել է նաև եկամուտների մյուս ուղղությունների գծով, որը խանգարել է նախատեսված տեղական նշանակության ծախսերի ժամանակին կատարմանը:

Բյուջետային տարում թույլ հսկողություն է իրականացվել հաշվապահական հաշվառման և համայնքային ենթակայության կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ, սեփական եկամուտների հավաքագրման գործում բավարար չափով չեն օգտագործվել վարչարարության լծակները:

Ելնելով վերոհիշյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

Կողբ համայնքի ավագանին որոշեց

1. Հաստատել 2015թ. բյուջեի կատարման մասին Կողբ համայնքի ղեկավարի հաշվետվությունը:

2. Առաջարկել Կողբ համայքնի ղեկավարին.

2/1. 2015թ. արձանագրված թերությունները և բացթողումները վերացնելու, դրանք ընթացիկ բյուջետային տարում չկրկնելու համար սահմանել աշխատանքի ծրագիր և բյուջեի կատարման ընթացքի մասին եռամսյակը առնվազն մեկ անգամ հաշվետվություն պահանջել ՏԻՄ ֆինանսական ծառայությունից և հաղորդում ներկայացնել համայնքի ավագանուն,

2/2. Ուժեղացնել հսկողությունը բյուջեի մուտքերի նկատմամբ, մուտքերը ցածր լինելու դեպքում քայլեր ձեռնարկել պատճառները հայտնաբերելու և իրավիճակը շտկելու համար,

2/3.Հսկողություն սահմանել նաև ծախսերի կատարման նկատմամբ,պարզել ծախսային իրադրությունը, կրճատել կենսական նշանակություն չունեցող ծախսերը,

2/4.Ուժեղացնել հսկողությունը հաշվապահական հաշվառման նկատմամբ և համայնքային ենթակայության կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ:

3. Սույն որոշումը օրենքով սահմանված ժամկետում ներկայացնել Տավուշի մարզպետարան:

4. Սույն որոշումը «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34- րդ հոդվածի պահանջների կարգով պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման համար ուղարկել Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարություն:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

Կողմ - 7
Դեմ – 0
Ձեռնպահ –0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱԲՈՎՅԱՆ

14մարտի 2016թ

Հավելված 1
Կողբ համայնքի ավագանու
2016 թ մարտի 11-ի
թիվ 2-Ն որոշման

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/01-01-2014թ -31.12.2014թ __ 01,01,2015թ-31.12.2015թ ԴՐՈՒԹՅԱՄԲ/

Հ/Հ	Եկամտատեսակների անվանումը	2014թ			2015թ		
		Ծրագիր հազ.դրամ-	Փաստացի կատարվել է հազ.դրամ	%	Ծրագիր հազ.դրամ	Փաստացի կատարվել է հազ.դրամ	%
	ԸՆԴԱՄՆԸՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ՝	86597.0	86092.5	99.4	106313.15	105852.35	99.5
I.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ՝	16037.0	15743.0	98.1	17750.0	17362.3	97,8
1.	Գույքահարկ համայնքի տարածքում գտնվող շենք – շինությունների համար	311.0	541.9	174.2	350.0	395.1	112,9
2.	Հողի հարկ	4900.0	4237.0	86.4	4270.0	4269.7	100.0
3.	Գույքահարկ փոխադրա միջոցների համար	10300.0	10509.8	102.0	12750.0	12328.5	96,6
4.	Տեղական տուրքեր	526.0	454.0	86.3	380.0	369.0	97.1
II.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ՝ ՈՐԻՑ.	69720.0	69720.0	100.0	87757.15	87751.15	100.0
1.	Պետ.բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա	62663.0	62663.0	100.0	70221.6	70221.6	100.0
2.	Պետ.բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիա	2535.5	2535.5	100.0	2535.5	2535.5	100.0
3.	Պետ.բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող /սուբվենցիա/	4520.6	4520.6	100.0	5334.7	5334.7	100.0
4	Պետ.բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող ոչ այլ դոտացիա				7990.4	7990.4	100.0
5	Պետ.բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող /սուբվենցիա/ զործազուրկներ				1344.95	1344.95	100.0
6	ՀՀ Պետ.բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող կապիտալ /սուբվենցիա/				324.0	324.0	100.0
III.	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	840.0	629.8	74.9	812.0	738.9	91,0
1.	Հողի վարձակալությունից վարձավճար	450.0	477.8	106.2	450.0	495.7	110.0
2.	Այլ գույքի վարձակալությունից վարձավճար	240.0	140.0	58.3	252.0	170.0	67,0
3.	Տեղական վճարներ	50.0	12.0	24.0	10.0	14.0	140.0
	Այլ եկամուտներ				100.0	59.2	59,2
IV.	ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ ԾԱԾԿՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ		4452.4		3552.6	3552.6	

ԿՈՂԲԻ ՀԱՆԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.ԱԲԱՐՍԵՂՅԱՆ

Հավելված 2
Կողբ համայնքի ավագանու
2016թ մարտի 11-ի
Թիվ 2-Ն որոշման

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ ԲՅՈՒՋԵԻ ՇԱԽՄԵՐԻ ՄԱՍԻՆ

01.01.2014թ -31.12.2014թ --- 01.01.2015թ-31.12..2015թ ԴՐՈՒԹՅԱՄԲ/

Հ/Հ	Ծախսերի անվանումը	2014թ			2015թ		
		Ծրագիր հազ.դրամ	Ֆինանսավորվել է հազ.դրամ	Մնացորդը հազ.դրամ	Ծրագիր հազ.դրամ	Ֆինանսավորվել է հազ.դրամ	Մնացորդը հազ.դրամ
1	2	3	4	5	6	7	8
	ԸՆԴԱՄԵՆԸ	91049.4	88384.3	2665.1	109865.75	107066.35	2799.4
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՈՐԻՑ՝	31852.7	30711.4		37537.5	35494.75	2042.75
	1. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԱՅԴ ԹՎՈՒՄ՝	27573.5	26457.1		32332.5	30962.9.	1369.6
1.1	Աշխատողների աշխատավարձ	19712.4	19398.6	313.8	24037.0	23956.8	80.2
1.2	Պարգևատրումներ	1633.7	1624.2	9.5	2254.5	2205.7	48.8
1.3	Կապի ծառայություն	750.0	795.5	4.5	769.0	726.0	43.0
1.4	Էներգետիկ ծառայություն	850.0	623.7	226.3	900.0	709.7	190.3
1.5	Ներքին գործուղումներ	250.0	147.0	103.0	176.0	159.1	16.9
1.6	Տեղեկատվական ծառայություն	130.0	124.0	6.0	175.0	174.2	0.8
1.7	Գրասենյակային նյութեր	400.0	400.0	---	400.0	400.0	-
1.8	Տրանսպորտային նյութեր	1615.0	1615.0	---	1340.0	1339.9	0.1
1.9	Ներկայացուցչական ծախսեր	250.0	250.0	---	405.0	360.0	45.0
1.10	Ապահովագրական ծախսեր	120.0	120.0	---	120.0	100.9	19.1
1.11	Մեքենաների և սարքավորումների նորոգում	100.0	100.0	----	200.0	200.0	-
1.12	Կենցաղային նյութեր	100.0	100.0	----	190.0	190.0	-
1.13	Շինարարություն	102.4	102.4	---			
1.14	Վարչական սարքավորումներ	380.0	374.3	5.7	400.0	235.0	165.0
1.15	Հատուկ նպատակային նյութեր	102.4	102.4	----	55.0	55.0	-
1.16	Շենք շինությունների կապիտալ վերանորոգում	900.0	480.0	420.0	350.0		

1.17	Պարտադիր վճարներ	30.0	19.5		30.0	26.0	4.0
1.18	Մասնագիտական ծառայություններ	50.0	32.9	17.1	50.0	43.7	6.3
1.19	Այլ ծախսեր				81.0	81.0	-
2.	ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ		102.0	102.0	110.0	105.6	4.4
3.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ՝այդ թվում		4177.2	4152.3	5095.0	4426.25	668.5
	Ընդ.բնույթի այլ ծառ.				570,0	565,2	4,8
	Մասնագիտական ծառ.՝չափագրում				980,0	978,9	1,1
	Հատուկ նպատակային նյ.				570,0	569,1	0,9
	Պետ.տուրք՝ջրօգ.թույլտվ.				80,0	20,0	60,0
	Պետ տուրք՝ԱԳԿ				221,0	181,0	40,0
	Նվիրատվ. Շահույթ չհետ.կազմակերպության				100,0	100,0	-
	Շենք շինության կառ.				1650,0	1177,6	472,4
	Շենք շինության կապ.վեր				324,0	324,0	-
	Վարչական սարքավորում				300,0	300,0	-
	Այլ սարքավորումներ				300,0	210,7	89,3
4.	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		47.0	47.0	-1973.0		-1973.0
4.	Գյուղատնտեսություն	47.0	47.0	--	1848.0	1847.6	0.4
4.1	Գյուղատնտեսություն	47.0	47.0	--	50.0	50.0	-
4.2	Համայնքի կողմից ներդրում	--	--	--	1798.0	1797.6	0.4
		--	--	--			
5.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՐԻՑ՝		6814.7	6691.6	8200.0	7910.3	289.7
5.1	Աղբահանում	6814.7	6691.6	123.1	8200.0	7910.3	289.7
6.	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՐԻՑ՝		850.0	627.9			
6.1	Ջրամատակարարում	---	---	---			
6.2	Փողոցային լուսավորություն	850.0	627.9	222.1	2173.0	655.6	1517.4
7.	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ ՈՐԻՑ՝		13032.2	13031.5	15587.7	15513.3	74.4
7.1	Մշակութային ծառայություն	750.0	750.0	---	864.0	862.4	1.6
7.2	Մշակույթի Կենտրոն	12032.2	12031.5	0.7	14303.7	14230.9	72.8
7.3	Հեռուստահաղորդումներ	250.0	250.0	---	420.0	420.0	-
8.	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՈՐԻՑ՝		36450.4	35272.5	42400.0	42400.0	-
8.1	Նախադպրոցական կրթություն	25425.8	24247.9	1177.9	28240.0	28240.0	-
8.2	Արտադպրոցական դաստիարակություն	11024.6	11024.6	----	14160.0	14160.0	-

9.	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՐԻՑ՝		1600.0	1600.0	3389.95	3244.8	145.15
9.1	Ընտանիքի անդամներ և զավակներ	250.0	250.0	---	450.0	305.0	145.15
9.2	Սոցիալական հատուկ արտոնություններ	1350.0	1350.0	----	1550.0	1550.0	-
9.3	գործազրկություն				1389.95	1389.8	
10.	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ	402.4	402.4	---	702.6		702.6

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

2015թ ազատ մնացորդը կազմել է 4543,1հազ. դրամ,
որի մեջ հողի օտարումից մուտք՝2204,5 հազ.դրամ:

ԿՈՂԲԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Պ.Մ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

11 մարտի 2016 թ N 3 –Ն

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ՝ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ավագանին նշում է որ «Գյուղական տարածքների զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և Կողբ համայնքի միջև 2015թ դեկտեմբերի 29-ին կնքվել է Կողբ համայնքի ջրամատակարարման համակարգի կառուցման և վերակառուցման աշխատանքների համատեղ իրականացման պայմանագիր:
Նշված աշխատանքների համաֆինանսավորման համար անհրաժեշտ զումարի 5%-ը, որը կազմում է 9547081դրամ, որպես աջակցություն համայնքին է հատկացվել «Գրանդ Հոլդինգ» ընկերության կողմից:
Ելնելով վերոհիշյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3/-րդ և 23-րդ կետերի պահանջներով

Ավագանին որոշեց

1.Կողբ համայնքի բյուջեի եկամտային մասում ավելացնել 9547081 դրամ ոչ պաշտոնական դրամաշնորհ:

2.Կողբ համայնքի բյուջեի ծախսային մասում գործառնական դասակարգման բաժին 06 խումբ 3 դաս 1 /ջրամատակարարում/ տնտեսագիտական դասակարգման հոդված 4657 –ին /այլ կապիտալ դրամաշնորհներ/ ավելացնել 9547081 դրամ:

3.Առաջարկել Կողբ համայնքի ղեկավարին՝համայնքին տրամադրված 9547081 դրամը համաֆինանսավորման նպատակով ուղղել համայնքի ջրամատակարարման համակարգի կառուցման աշխատանքներին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

Կողմ -- 7

Դեմ -- 0

Ձեռնպահ -- 0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Ա.ԱԲՈՎՅԱՆ

14մարտի 2016թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

11 մարտի 2016թ **4-Ա**

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013Թ. ՀՈՒՆԻՍԻ 21-Ի N 25 - Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2016թ. փետրվարի 9-ի N 90-Ա հրամանով ՀՀ Տարածքային կառավարման նախարարի 2006թ. նոյեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի գյուղապետարանների աշխատակազմերի Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերը հաստատելու մասին» N 201-Ա հրամանի վերնագրում, տեքստում և հավելվածներում «գյուղապետարանների» և «գյուղապետարանի» բառերը փոխարինվել են համապատասխանաբար «Համայնքապետարանների» և «Համայնքապետարանի» բառերով: Ելնելով վերոհիշյալից և ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով

Ավագանին որոշեց

1. Կողբ համայնքի ավագանու 2013թ հունիսի 21-ի N25-Ա որոշմամբ հաստատված Կողբի գյուղապետարանի աշխատակազմի կանոնադրության վերնագրում և տեքստում «Գյուղապետարան» բառը փոխարինել «Համայնքապետարան» բառով:

2. Առաջարկել Կողբ համայնքի ղեկավարին՝ համայնքապետարանի կնիքը, ձևաթղթերը և անհատականացման այլ միջոցները համապատասխանեցնել սույն որոշման պահանջներին:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

Կողմ - 7

Դեմ – 0

Ձեռնպահ –0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Ա.ԱԲՈՎՅԱՆ

14մարտի 2016թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

11 մարտի 2016թ **5-Ա**

ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԱՅԴ ՀՈՂԵՐԻ ՎՐԱ ՈՒՆԵՑԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով որ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թ. դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքների համար վճարման ենթակա հողի հարկի և այդ հողերի վրա անշարժ գույքի գումարները ֆիզիկական և իրավաբանական անձանց անունից համայնքի բյուջե է վճարվում Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից

Ավագանին որոշեց

1.Հաստատել սահմանամերձ չօգտագործվող հողատարածքների հողի հարկի և այդ հողերի վրա անշարժ գույքի գումարները ըստ հարկատուների:

2.Առաջարկել Կողբ համայնքի ղեկավարին սույն որոշմամբ հաստատված ցուցակը ներկայացնել ՀՀ Տավուշի մարզպետարան:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

Կողմ - 7

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱԲՈՎՅԱՆ
14մարտի 2016թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

11 մարտի 2016թ. N 6 -Ա

«ԿՈՂԲԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀՈԱԿ _Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով որ համայնքի բնակչության թվաքանակի հետ կապված առանձին փոփոխություններ են կատարվել «Կողբի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերում, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26/-րդ կետի պահանջներով

Ավագանին որոշեց

1.Հաստատել «Կողբի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Որոշումը քվեարկությամբ ընդունվեց՝

Կողմ 7
Դեմ 0
Չեռնպահ 0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Ա. ԱԲՈՎՅԱՆ
Գ. ԿՈՂԲ
14 մարտի 2016թ.

Հավելված7

ՀՀ Տավուշի մարզի Կողբ համայնքի ավագանու

11.03.2016թ N 6 -Ա որոշման

<<ԿՈՂԲԻ ԲԱ>> ՀՈԱԿ _ Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակ 13

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	____% հավելավճար (դրամ)	Ամսական աշխատավարձ (դրամ)
1	Տնօրեն	1	170000		170000
2	Ընտանեկան բժիշկ	1	407454		407454
3	Ընտանեկան բժիշկ	1	202471		202471
4	Գլխավոր հաշվապահ	1	98000		98000
5	Բուժքույր	1	128397		128397
6	Բուժքույր -լաբարանտ	1	100781		100781
7	Բուժքույր	1	100799		100799
8	Բուժքույր	1	72770		71770
9	Բուժքույր N1 դպրոց	0.42	75800		29560
10	Բուժքույր N2 դպրոց	0.35	75800		26561
11	Համակարգչային օպերատոր	1	86000		86000
12	Վարորդ	1	72751	5153	77904
13	Հավաքարար	1	72751	5153	77904
	Ընդամենը	11.77	1674080	10306	1578708

Աշխատակազմի քարտուղար Ս.Ս.Բաբսեղյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

11 Մարտի 2016թ N7–Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի և ՀՀ Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի պահանջներով

Ավագանին որոշեց

1.Համաձայնել Կողբ համայնքի ղեկավարի առաջարկին՝

1/1.11-041-0356-0051 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող 0.04949 հեկտար գյուղատնտեսական նշանակության այլ հողի աճուրդ վաճառք հայտարարելու մասին:
Աճուրդի դրվելիք հողամասի մեկնարկային գին սահմանել 7500 դրամ, սակարկությունների ժամանակ քայլի չափ՝ 1000 դրամ:

1/2.11-041-0355-0055 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող 0.19928 հեկտար գյուղատնտեսական նշանակության այլ հողի աճուրդ-վաճառք հայտարարելու մասին:
Աճուրդի դրվելիք հողամասի մեկնարկային գին սահմանել 150000 դրամ, սակարկությունների ժամանակ քայլի չափ՝ 1000 դրամ:

1/3.11-041-0350-0048 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող 0.13524 հեկտար գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի վարելահողի աճուրդ - վաճառք հայտարարելու մասին:
Աճուրդի դրվելիք հողամասի մեկնարկային գին սահմանել 400000դրամ, սակարկությունների ժամանակ քայլի չափ՝ 1000 դրամ:

1/4.11-041-0420-0011 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող 0.1133 հեկտար գյուղատնտեսական նշանակության այլ հողի աճուրդ – վաճառք հայտարարելու մասին:
Աճուրդի դրվելիք հողամասի մեկնարկային գին սահմանել 50000 դրամ, սակարկությունների ժամանակ քայլի չափ՝ 1000 դրամ:

1/5.11-041-0419-0004 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող 0.08535 հեկտար գյուղատնտեսական նշանակության 1-ին կարգի արոտի աճուրդ-վաճառք հայտարարելու մասին:
Աճուրդի դրվելիք հողամասի մեկնարկային գին սահմանել 80000 դրամ,սակարկությունների ժամանակ քայլի չափ՝ 1000 դրամ:

1/6.11-041-0360-0016 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող 0.11781 հեկտար գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի վարելահողի աճուրդ - վաճառք հայտարարելու մասին:
Աճուրդի դրվելիք հողամասի մեկնարկային գին սահմանել 33400դրամ, սակարկությունների ժամանակ քայլի չափ՝ 1000 դրամ:

2. Առաջարկել Կողբ համայնքի ղեկավարին.
Օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարություն հրապարակել աճուրդների անցկացման տեղի ու ժամանակի, հողամասերի գտնվելու վայրի, աճուրդներին ներկայացվող այլ պայմանների և պահանջների մասին:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

Կողմ -7

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Ա.ԱԲՈՎՅԱՆ
14 մարտի 2016թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

11 մարտի 2016 թ N 8 –Ա

11 – 041 – 0074 -0042 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.00386 ՀԵԿՏԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի և ՀՀ Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի պահանջներով

Ավագանին որոշեց

1.Համաձայնել Կողբ համայնքի ղեկավարի առաջարկին՝ 11-041-0074-0042 կադաստրային ծածկագրով 0.00386 հեկտար համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրի հասարակական կառուցապատման հողի կառուցապատման իրավունքով վարձակալության մրցույթ հայտարարելու մասին:
Հողամասի տարեկան վարձավճարի սահմանը 1500 դրամ, սակարկությունների ժամանակ քայլի չափ՝ 1000 դրամ, իսկ վարձակալության ժամկետ՝ 50 տարի:

2.Առաջարկել Կողբ համայնքի ղեկավարին՝օրենքով սահմանված կարգով հրապարակել մրցույթի անցկացման տեղն ու ժամանակը, մրցույթին ներկայացվող պայմանները և պահանջները, ինչպես նաև այլ լրացուցիչ տեղեկություններ հողամասի վերաբերյալ:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

Կողմ -- 7

Դեմ --0

Չեռնպահ --0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Ա.ԱԲՈՎՅԱՆ

14 մարտի 2016թ